Գյուղական նորարարական զբոսաշրջության խթանում

Ընդհանուր տեղեկատվություն

Ոլորտ՝	Բնապահպանություն
Տևողություն՝	18 ամիս
Իրականացման ժամանակահատված՝	նոյեմբեր 2013 – մայիս 2015
Ընդհանուր բյուջե՝	672,266 եվրո
ՀՀ շահառու հաստատություն՝	Հեյֆեր միջազգային ծրագրի հայկական մասնաճյուղ
Մասնակից երկրներ՝	Հայաստան, Վրաստան, Բուլղարիա, Թուրքիա

Ծրագրի նկարագրություն

Ընդհանուր նպատակները՝ Հասնել ավելի հզոր տարածաշրջանային համագործակցության և գործընկերության՝ Սևծովյան ավազանում (հատկապես խոցելի, գյուղական վայրերում) տնտեսական և սոցիալական զարգացումը խթանելու միջոցով՝ ֆիզիկական ու մարդկային ռեսուրսների ինտեգրված օգտագործման և ապրանքների ու ծառայությունների մատակարարման ստանդարտների բարելավմանն ուղղված լավագույն փորձի փոխանակման օգնությամբ:

Հեռք բերված արդյունքները՝

- Մշակվել են տեղական ծառայություններ մատուցողների և տեղական զբոսաշրջային գործակալությունների տվյալների բազաները ծրագրի մասնակից բոլոր երկրներում,
- Ծրագրի մասնակից բոլոր երկրներում կազմակերպվել են ծրագրի խթանման և ծրագրի վերաբերյալ իրազեկվածության բարձրացման 3-ական միջոցառումներ,
- Ուսուցողական այցեր են կազմակերպվել դեպի Հայաստան, Բուլղարիա, Վրաստան և Թուրքիա: Ընդհանուր առմամբ բոլոր 4 երկրներից 106 մարդ մասնակցել է ուսուցողական այցերին,
- Բուլղարիայում անց է կացվել հարաբերությունների զարգացման հանդիպում 70 մարդու մասնակցությամբ, այդ թվում՝ 42-ը Հայաստանից, Վրաստանից և Թուրքիայից,

- Ստեղծվել և հրատարակվել է ուսուցողական ձեռնարկ հայերեն և անգլերեն լեզուներով,
- Մշակվել, բոլոր մասնակից երկրների լեզուներով թարգմանվել և թողարկվել են 6 էլեկտրոնային լրատուներ և 5 թեմատիկ թռուցիկներ,
- Ստեղծվել և գործում է ծրագրի կայք-էջը www.blackseatourism.org,
- Ծրագրի մասին նկարահանվել է 3 ֆիլմ,
- Ծրագրի հիմնական արդյունքի վերաբերյալ ստեղծվել և Եվրոնյուզ հեռուստաալիքով հեռարձակվել են 4 զովազդային հոլովակներ:

Հավելյալ տեղեկատվություն

Գյուղական նորարարական զբոսաշրջության խթանում (http://blacksea-cbc.net/wp-content/uploads/2015/12/fact-sheet-MIS-2619.pdf)